

Նախադպրոցականների մոտ մաթեմատիկական հմտությունների զարգացումը դիդակտիկ խաղերի միջոցով

Նախադպրոցական տարիքի երեխաների համար խաղը համարվում է առաջատար գործունեություն: Խաղի ընթացքում զարգանում և կատարելագործվում են երեխայի ճանաչողական շատ գործընթացներ՝ ընկալում, երևակայություն, մտածողություն, տրամաբանություն, խոսք, հիշողություն և այլն:

Դիդակտիկ խաղերը երեխաների մտավոր զարգացման կարևոր միջոցներից են: Դրանք մանկավարժի կողմից անցկացված բոլոր պարապմունքների պարտադիր մասն են կազմում: Հաշվի առնելով երեխաների տարիքը՝ մանկավարժը սովորաբար ուսուցումն իրականացնում է խաղի ձևով՝ օգտագործելով դիդակտիկ նյութեր, խաղալիքներ, բազմաթիվ նկարներ: Դիդակտիկ խաղի նպատակն է՝ սովորողին խաղալով սովորեցնել համեմատել, համադրել, դասակարգել, ընդհանրացնել, այսինքն՝ կատարել մտավոր գործողություն, ընդ որում, ուսուցողական խնդիրը սովորողից գաղտնի է մնում, և նրան թվում է, թե ինքն ուղղակի խաղում է:

Մաթեմատիկական բովանդակությամբ յուրաքանչյուր դիդակտիկ խաղ ունի իր խնդիրները՝ զարգացնել բանավոր համրանք կատարելու ունակությունը, ծանոթացնել երկրաչափական պարզ ձևերին, ծանոթացնել թվերի բնական շարքին, ծանոթացնել թվանշաններին, թվերի կազմությանը: Խաղերում ստեղծվում են այնպիսի իրավիճակներ, որոնք երեխաներին կմղեն փոխօգնության, աշխատանքի արդյունքը համատեղ քննարկելուն, դրական հույզերի առաջացմանն ու զարգացմանը:

Ինչ խոսք, որ այս ձևով խաղալու ընթացքում երեխան էլ իր սեփական փորձը, վերաբերմունքը, հմտությունները և սովորելու ոճն է բերում խաղի մեջ, և դառնում նրա ոչ թե պասիվ, այլ ակտիվ մասնակիցն ու կատարողը: Խաղերի հիմքում ընկած են հետևյալ նպատակները հետապնդող առաջադրանքները.

1. Ուշադրության և դիտողականության զարգացում
2. Ստեղծագործական երևակայության զարգացում
3. Մտածողությունը զարգացնող վերլուծական, կառուցողական ունակություններն ամրապնդող, հետաքրքրաշարժ, տրամաբանական, կատակ-խնդիրներ, մաթեմատիկական գլուխկոտրուկներ, հանելուկներ:

Երեխաների համար հեշտ է առարկաները հաշվել, եթե դրանք շոշափելի են ու շարքով դասավորված:

Ուսուցման վաղ տարիքում երեխան պետք է սովորի 1-ից 10-ը արագ ու անսխալ հաշվել: Դրանք հերթականությամբ սովորելու համար նա թվերը բազմիցս դիտելու կարիք ունի:

Ստորև առաջարկում ենք մաթեմատիկական հմտությունները զարգացնող մի քանի խաղ:

«ՊՏՏՎՈՂ ԹՎԵՐ»



Նպատակ. Թվերի ճանաչման և ուսուցման, հաշվելու ընդունակության, մանր շարժունակության և տեսաշարժողական կոորդինացիայի, համադրելու կարողության զարգացում:

Անհրաժեշտ պարագաներ. տախտակ, որի վրա ամրացվում են 1-10 թվերով կափարիչներ, զառեր, 1-10 թվերով քարտեր (փազլներ):


Ընթացքը. Աշխատանքային սեղանին դնում ենք տախտակը, որի մի կողմում դրված են 1-10 թվով կափարիչները, մյուս կողմում՝ 1-10 թվով քարտերը (փազլները): Խաղի ընթացքում երեխան զգում է զառը, վերցնում է համապատասխան թվով կափարիչն ու քարտը /փազլը/ և անվանելով այն՝ ամրացնում է տախտակի վրա:



Մեթոդական ցուցում. Խաղը կարելի է կիրառել ինչպես անհատական, այնպես էլ խմբային տարբերակով:

Հետագայում պարզից բարդ սկզբունքի համաձայն, խաղը կարելի է բարդացնել՝ ավելի մեծ թվեր ուսուցանելիս:

«ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳՈՐԳ»



Նպատակ. Թվերի ճանաչման և ուսուցման, հաշվելու, համեմատելու, թիվը քանակի հետ համադրելու, երկրաչափական պատկերները ճանաչելու, մանր շարժունակության և տեսաշարժողական կոորդինացիայի, թվաբանական գործողություններ կատարելու կարողության զարգացում:

Անհրաժեշտ պարագաներ. Կտորից կամ ֆետրից պատրաստված գորգ, որի կաշուն ժապավենի վրա ամրացվում են 1-10 թվերը, մեծի, փոքրի, գումարման, հանման, հավասարի նշանները, երկրաչափական պատկերներ՝ եռանկյուն, քառակուսի, շրջան, ռեզինի վրա անցկացված ուլունքներ՝ հաշվելու համար, ֆետրից պատրաստված 2 ձեռք, որոնց ծայրերը պատրաստված են ինքնակաշուն նյութից:

Ընթացքը. Աշխատանքային սեղանին դնում ենք գորգը: Ըստ թեմայի՝ երեխան կատարում է ուսուցչի հրահանգը:

Օրինակ՝ թվերի շարքից վերցնում է 1-ը, ամրացնում գորգի ներքևի ձախ անկյունում գտնվող ինքնակաշունին, գործողությունների շարքից՝ +՝-ը, հետո՝ 2-ը, այնուհետև «=»-ի նշանը: Ծալում ենք ձեռքի մատները և ստացված համապատասխան թիվը կաշնում հավասարից հետո ($1+2=3$):

Մեթոդական ցուցում. Խաղը կարելի է կիրառել ինչպես թվերը, այնպես էլ երկրաչափական պատկերներն ուսուցանելիս և թվաբանական գործողություններ կատարելիս (+ - < > =):

Հետագայում, պարզից բարդ սկզբունքի համաձայն, խաղը կարելի է բարդացնել՝ ավելի մեծ թվեր սովորեցնելով:

Գրականության ցանկ

1. Բաղդասարյան Ա., «Խաղալով սովորեցնենք», «Նախաշավիղ» Գիտամեթոդական հանդես, Երևան, ԿԱԻ, Կրթության ազգային ինստիտուտ, 2011 №6, էջ 28 - 31:
2. Բաղդասարյան Ա., «Խաղ – պարապմունքները՝ որպես կրտսեր տարիքի երեխաների խոսքի զարգացման միջոց», «Նախաշավիղ», Երևան, ԿԱԻ, 2012 №6, էջ 35 – 43:
3. Գյուլամիրյան Զ. Հ., Խաղալով սովորենք,-Երևան, «Զանգակ» 2009, 79 էջ:
4. Գևորգյան Ա., «Ուսուցում և խաղ», «Նախաշավիղ», Երևան, ԿԱԻ, 2013 №2, էջ 56 – 60:
5. Абылгазиева И.И., Ильина И. В., Земцов Д. И., Федосеев А. И., Инновационные технологии в образовании выпуск №2, 1. Теория и методология игр в образовании, Издательство ООО, МАКС Пресс, 2011, 145 с..
Глумова С. Н., Дидактическая игра как средство развития познавательного интереса младших школьников на уроках математики, Белгород, Вейделевка 2012, 22 с..